

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգ

I. Ներածություն

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգը և գործնական պլանը մշակվել է ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիայի (վավերացված է Վրաստանի խորհրդարանի կողմից, 2005 թվականին) և «Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի մշակման մասին» Վրաստանի նախագահի 2005 թվականի օգոստոսի 8-ի №639 կարգադրության հիման վրա: Նրա հիմնական նպատակն է աջակցությունը ժողովրդավարական, համախմբված և ընդհանուր արժեքների վրա հիմնված քաղաքացիական հասարակության ստեղծմանը, որը բազմաբղետությունը համարում է իր ամրության աղբյուր և ամեն քաղաքացու ապահովում է սեփական նույնականության պահպանության և զարգացման հնարավորություններով:

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգը և գործնական պլանը հիմնվում է Վրաստանի Սահմանադրության և Վրաստանի ստանձնած միջազգային պարտականությունների վրա: Լայն հասարակական կոնսենսուսի հասնելու նպատակով ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի մշակման գործընթացում ապահովված էր ամեն շահագրգիռ կողմի մասնակցությունը: Փաստաթղթի նախագիծը պատրաստվել է Վրաստանի նախագահին կից գործող ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային խորհրդի կողմից, որի կազմում մտնում են Վրաստանի խորհրդարանի անդամները, ժողովրդական պաշտպանը, ազգային փոքրամասնությունների, ոչկառավարական կազմակերպությունների, նախարարությունների և այլ կառավարական հիմնարկությունների ներկայացուցիչներ: Նախագծի պատրաստության գործընթացում մշտական խորհրդատվություն էր ընթանում ժողովրդական պաշտպանին կից գոյություն ունեցող ազգային փոքրամասնությունների խորհրդի մոտ: Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային խորհուրդը

նույնպես պարբերաբար վարում էր հանդիպումներ ազգային փոքրամասնություններով խիտ բնակեցված տարածաշրջանների բնակչության և տեղական ոչկառավարական կազմակերպությունների հետ:

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգը որոշում է պետության ռազմավարությունը և խնդիրները վեց հիմնական ուղղություններով. օրենքի գերակայություն, կրթություն և պետական լեզու, մեդիա և լրատվության մատչելիություն, քաղաքական ինտեգրում և քաղաքացիական մասնակցություն, սոցիալական և տարածաշրջանային ինտեգրում, մշակույթի և ինքնագոյության պահպանում: Գործողությունների պլանը նախատեսում է կոնկրետ միջոցառումներ և ծրագրեր ազգային հայեցակարգի ռազմավարական ուղղություններին համապատասխան, որոնք պետք է իրականացվեն առաջիկա հինգ տարիների ընթացքում: Գործողությունների պլանի համապատասխան բաղկացուցիչների իրականացման պարտականությունը դրվում է դրանում մատնանշված կոնկրետ պետական հիմնարկությունների վրա:

Գործնական պլանի իրականացումը համակարգում է վերաինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակարգը: Գործնական պլանի իրականացման համար պատասխանատու պետական հիմնարկները, վերաինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի կողմից մշակված քաղաքականության համապատասխան, մինչև յուրաքանչյուր ամսվա 5 –ը ներկայացնում են նրան իրենց իրավասության շրջանակներում պատրաստված հաշվետվությունները: Յուրաքանչյուր տարվա մինչև դեկտեմբերի 10-ը վերաինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը ներկայացնում է Վրաստանի կառավարությանը և ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային խորհրդի հաշվետվությունը պատասխանատու պետական հիմնարկությունների կողմից գործնական պլանի իրականացման մասին:

Գործնական պլանի իրականացումը վերահսկում է ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային խորհուրդը, որը, ըստ անհրաժեշտության, կմշակի երաշխավորություններ գործնական պլանի իրականացման կապակցությամբ և կքննարկի առաջարկություններ գործողությունների պլանում փոփոխություններ և լրացումներ մտցնելու թեմայով:

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի գործողությունը չի սահմանափակվում այն վայրերով, որտեղ ավանդաբար կամ մեծ թվաքանակությամբ բնակեցված են ազգային փոքրամասնություններ:

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի ֆինանսավորման հիմնական աղբյուրը Վրաստանի պետական բյուջեն է:

II. Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի նպատակները

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի նպատակներն են.

ա) հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի միջավայրի ստեղծում Վրաստանում բնակվող բոլոր անձանց միջև,.

բ) Վրաստանի բոլոր քաղաքացիների ապահովում քաղաքացիական, քաղաքական, տնտեսական և սոցիալական իրավունքներից օգտվելու հավասար հնարավորություններով .

գ) անհրաժեշտ պայմանների ստեղծում Վրաստանի քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներին այն անձանց արդյունավետ մասնակցության համար, որոնք պատկանում են ազգային փոքրամասնություններին;

դ) ազգային փոքրամասնությունների համար կրթության բոլոր աստիճանների հավասար մատչելիության և ընդհանուր կրթության բնագավառում հատուկ լուսավորչական անհրաժեշտությունների ապահովում,.

ե) անհրաժեշտ պայմանների ստեղծում ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանության և զարգացման համար, նրանց ինքնագոյության հիմնական տարրերի, մասնավորապես, կրոնի, լեզվի, ավանդույթների և մշակութային ժառանգության պաշտպանության համար:

III. Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի սկզբունքները

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի սկզբունքներն են.

ա) Վրաստանի բոլոր քաղաքացիների հավասարություն, ճնշման անթույլատրելիություն և հանդուրժողականության ավանդույթի հաստատում,

բ) հավասարակշռության պահպանում քաղաքացիական ինտեգրման և ազգային փոքրամասնությունների նույնականության պաշտպանության միջև, քաղաքացիական ինտեգրման կամավորականություն և բռնի ուժացման անթույլատրելիություն,

գ) ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ազատ ընտրության իրավունք – վարվե՛ն, թե՛ ոչ նրանց հետ որպես ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների,

դ) ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը որպես անհատ, այնպես էլ ուրիշների հետ համատեղ իրականացնելու այն իրավունքները և ազատությունները, որոնք բխում են Վրաստանի Սահմանադրության և ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիայից,

ե) ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցություն բոլոր այն որոշումների ընդունմանը, որոնք ուղիղ կամ ոչանմիջականորեն վերաբերում են նրանց նույնականության պաշտպանությանը և զարգացմանը,

զ) ներողամտության և քաղաքացիական ինտեգրման գործնական պլանի իրականացման մոնիտորինգի գործընթացում հասարակական կազմակերպությունների ընդգրկման ապահովում:

IV. Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի հիմնական ուղղությունները

1. Օրենքի գերակայություն

Օրենքի գերակայությունը ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի ռազմավարական ուղղություններից մեկն է, որը բովանդակում է հետևյալ խնդիրների իրականացում.

ա) Վրաստանի օրենսդրության հետագա ներդաշնակում Վրաստանի միջազգային պարտականությունների հետ.

բ) ազգային փոքրամասնությունների կողմից արդարադատության համակարգի մատչելիության բարելավում.

գ) խտրական վերաբերմունքից ազգային փոքրամասնությունների արդյունավետ պաշտպանության ապահովում.

դ) հանրային ծառայողների գիտակցության բարձրացում ազգային փոքրամասնությունների իրավունքների և հակախտրական օրենսդրության նկատմամբ:

2. Կրթություն և պետական լեզու

Քաղաքացիական ինտեգրման ամենալուրջ մարտահրավերներից մեկը ազգային փոքրամասնությունների կողմից պետական լեզվի չիմացությունն է, ինչը նշանակալիորեն խոչընդոտում է նրանց լիարժեք մասնակցությանը երկրի քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքին: Սկզբնական փուլում անհրաժեշտ է ազգային փոքրամասնությունների մոտիվացման բարձրացման աջակցություն՝ տիրապետելու վրաց լեզուն և հատուկ լուսավորչական կարիքներ ունեցող աշակերտների ինտեգրմանը աջակցող ծրագրերի իրականացում: Այս ուղղությամբ նախանշված են հետևյալ խնդիրները.

ա) ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար նախադպրոցական կրթության մատչելիության ապահովում.

- բ) ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար միջնակարգ կրթություն ստանալու աջակցություն,
- գ) ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար բարձրագույն կրթության մատչելիության բարելավում,
- դ) պետական լեզվի ուսուցման աջակցություն,
- ե) կրթության բնագավառում հանրային բանավեճի և քաղաքացիական ինտեգրման աջակցություն:

3. Լրատվամիջոցներ և լրատվության մատչելիություն

Ազգային փոքրամասնությունների իրազեկվածության տեսանկյունից կարևոր քայլ կատարվեց հանրային հեռարձակման կողմից, որի եթերում 2005 թվականից ընթանում են լրատվական ծրագրեր ազգային փոքրամասնությունների լեզուներով: Վերջին ժամանակաշրջանում իրականացված օրենսդրական փոփոխությունների համաձայն, հանրային հեռարձակման ծրագրային բյուջեի առնվազն 25% պետք է ծախսվի փոքրամասնությունների լեզուներով պատրաստված ծրագրերի հաղորդմանը: Պետական լեզվի իմացության ցածր մակարդակի և վրացական հաղորդակցական մեդիայի հիմնականում վրացալեզու հեռարձակման հաշվառումով, կարևոր է հատուկ միջոցառումների անցկացում ազգային փոքրամասնությունների պատշաճ լրատվության ապահովման համար: Այս ուղղությամբ նախանշված են հետևյալ խնդիրները.

- ա) ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում ազգային հեռարձակման մատչելիության ապահովում,
- բ) ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակման ծրագրերի մատչելիության ապահովում,
- գ) հաղորդումների ծրագրերում ազգային փոքրամասնությունների լուսաբանման և մասնակցության ապահովում,
- դ) ազգային փոքրամասնությունների լեզուներով էլեկտրոնային և տպագիր մեդիայի աջակցություն,

ե) մեղիայում հանդուրժողականության և մշակութային պլյուրալիզմի արմատավորման աջակցություն:

4. Քաղաքական ինտեգրում և քաղաքացիական մասնակցություն

Ազգային փոքրամասնությունների քաղաքական ինտեգրման և քաղաքացիական մասնակցության մակարդակի բարձրացման նպատակով վերջին տարիներին անց են կացվում հանրային գործիչների որակավորման բարձրացման թրեյնինգներ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար, ավանդաբար կամ մեծ թվաքանակությամբ ազգային փոքրամասնություններով բնակեցված մունիցիպալիտետներում ընթանում է նրանց խթանում հանրային ծառայություն ընտրելիս, իսկ ընտական նյութերը և քվեաթերթերը հրապարակվում են նրանց մայրենի լեզուներով: Ազգային փոքրամասնությունների հասարակական-քաղաքական կյանքում ակտիվ ընդգրկումը առավելապես կախված կլինի պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացման և սկզբնական փուլում պետության կողմից նրանց խթանումից հանրային ծառայությունում աշխատել սկսելու համար: Նշված ուղղություններով նախանշված են հետևյալ խնդիրները.

ա) ազգային փոքրամասնությունների հավասար ընտրական իրավունքի ապահովում,

բ) որոշումներ ընդունելու գործընթացում ազգային փոքրամասնությունների մասնակցության բարելավում,

գ) ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիայի ժողովրդականացում:

5. Սոցիալական և տարածաշրջանային ինտեգրում

Վերջին տարիներին նշանակալից քայլեր կատարվեցին երկրի սոցիալ-տնտեսական

կյանքում ազգային փոքրամասնությունների լիարժեք մասնակցության ապահովման համար: Ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում իրականացվեցին ենթակառուցյի վերակենդանացման և այլ մասշտաբային տնտեսական նախագծեր: Այս ուղղություններով նախանշված են հետևյալ խնդիրները.

ա) ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում ենթակառուցվածքի հետագա զարգացում,

բ) ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստում և նրանց աշխատանքային զբաղվածության օժանդակում,

գ) ազգային փոքրամասնությունների սոցիալական և տարածաշրջանային շարժունության աջակցություն:

6. Մշակույթ և ինքնագոյության պահպանում

Երկրի մշակութային կյանքում ազգային փոքրամասնությունների մասնակցության և նրանց մշակութային ժառանգության աջակցության նպատակով պետությունը պլանավորում է կոնկրետ միջոցառումների իրականացում տարբեր ուղղություններով, ինչը բովանդակում է հետևյալ խնդիրների իրականացում.

ա) քաղաքացիական գիտակցության ձևավորման աջակցություն,

բ) ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնագոյության պահպանության աջակցություն,

գ) ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության պաշտպանություն;

դ) հանդուրժողականության ոգևորության աջակցություն, միջմշակութային երկխոսության և կապերի օժանդակում;

ե) Վրաստանի մշակութային կյանքում ազգային փոքրամասնությունների մասնակցության աջակցություն,

զ) ազգային փոքրամասնության մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի մասին հասարակության գիտելիքների խորացում և որպես երկրի արժեքներ դրանց դրսևորում:

Գործնական պլան

Կրթություն և պետական լեզու				
ԽՆԴԻԲ №1	Օրագրի անվանում /միջոցառում	Իրականացնող կազմակերպություն/ գործընկեր	Իրականացման ժամկետներ	Գրառում
Ազգային փոքրամասնությունների լուսավորչական կարիքներին կողմնորոշված նախադպրոցական ուսումնական ծրագրերի պատրաստում և փորձարկում	1) Ազգային փոքրամասնությունների լուսավորչական կարիքներին կողմնորոշված նախադպրոցական ուսումնական ծրագրերի պատրաստում և փորձարկում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2014	
	2) Այն տարածաշրջաններում, որտեղ հոծ բնակվում են ազգային փոքրամասնություններ, դպրոցական պատրաստության մակարդակի բարձրացման նպատակով հասուկ ծրագրի մշակում: Նախադպրոցական կրթության և կոնկրետ ծրագրերի մասին ծնողների իրազեկության աճ:	Վաղ հասակի երեխայի հոգածության խորհրդարանային դաշինք. Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, տեղական ինքնակառավարում, ազգային ուսումնական պլանների և գնահատումների կենտրոն	2009-2014	
ԽՆԴԻԲ №2				
Աջակցություն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների միջնակարգ կրթություն ստանալուն	2.1	Ազգային ուսումնական պլանի թարգմանություն և արմատավորման թրեյնինգների անցկացում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոն	2009
	2.2	Ազգային փոքրամասնությունների լեզուներով դպրոցներում ուսուցման լեզվին համապատասխան դասագրքերի թարգմանություն	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոն	2009-2014
	2.3	Նպատակային օգնություն բարեփոխումային միջոցառումների իրականացման գործում՝ ազգային փոքրամասնությունների դպրոցների համար համապատասխան ծրագրերի մշակում և արմատավորում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2014

Աջակցություն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների միջնակարգ կրթություն ստանալուն	2.4	Երկլեզու ուսուցման քաղաքականության կատարելագործում, փորձարկում և արմատավորում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, ազգային ուսումնական պլանների և զնահատման կենտրոն, ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն	2009-2014	
	2.5	«Մասձավլեբելի» (Ուսուցիչ) ամսագրի հրատարակություն հայերեն և ադրբեջաներեն	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, Ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն	2009-2014	
	2.6	„Ուսուցչի օժանդակ ձեռնարկի“ (երեք մասով) և այլ օժանդակ ռեսուրսների թարգմանություն հայերեն և ադրբեջաներեն լեզուներով	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, Ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն	2009-2014	
	2.7	Նպատակային մասնագիտական թրեյնինգներ ուսուցիչների և դպրոցի վարչության համար	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն	2009-2014	
ԽՆԴԻՐ N3					
Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար բարձրագույն կրթության մատչելիության բարելավում	3.1	Բարձրագույն ուսումնական հաստատություններում նախապատրաստական-ինտեգրման դասընթացի հայեցակարգի մշակում, փորձարկում և արմատավորում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, քննությունների ազգային կենտրոն, բարձրագույն ուսումնական հաստատություններ	2009-2014	Օրենսդրական փոփոխություններ և առաջին հերթափոխի 2009 թ.
	3.2	„Մոցիալական դրամաշնորհների ծրագիր“ և այլ նպատակային ծրագրերի մշակում և արմատավորում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2014	
	3.3	Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների առաքում արտասահման բակլավորային և մագիստրային ծրագրերով	Զարգացման և բարեփոխման հիմնադրամ	2009-2014	

ԽՆԴԻՐ N4

Պետական լեզվի ուսուցման աջակցություն	4.1	Ոչվրացալեզու դպրոցներում վրացերենի, որպես երկրորդ լեզվի, ուսուցման ծրագրի արմատավորում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, ԵԱՀԿ	2009-2014	
	4.2	Վրաց լեզվի ձեռնարկների և ուսումնական ռեսուրսների ստեղծում և կատարելագործում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2014	
	4.3	Սամցխե-Ջավախեթիից և Քվեմո Քարթլիից ոչվրացալեզու դպրոցների վրաց լեզվի ուսուցիչների թրեյնինգ (հատուկ մասնագիտական վաուչեր ուսուցիչների համար «Վրացերենը, որպես հաղորդակցական լեզու» և «Վրացերենը որպես երկրորդ լեզու» դասավանդելու համար)	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն	2009-2014	Արդեն մտել է վաուչերային ֆինանսավորման մեջ
	4.4	Արտադասարանական լուսավորչական և քաղաքացիական ինտեգրմանը կողմնորոշված ծրագրերի և նախագծերի մշակում և իրականացում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2014	
	4.5	Դեռահասների և չափահասների համար պետական լեզվի տիրապետմանը օժանդակող ծրագրեր	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2014	Ոչկատավարական կազմակերպությունների հետ գործընկերությունը
	4.6	Վրաց լեզվի ուսուցիչներին տարածաշրջաններում գրավելու միջոցառումների պլանավորում և իրականացում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009	
	4.7	Վրաց լեզվի ուսումնառության համակարգչային և ինտեռնետային ծրագրեր, պորտալ, լուսավորչական խաղեր	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009	

ՄԵՂԻԱ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՁԵԼԻՈՅՈՒՆ

ԽՆԴԻՐ №1	Օրագրի անվանում/միջոցառում	Իրականացնող կազմակերպություն/ գործընկեր	Իրականացման ժամկետներ	Գրառում	
Ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում ազգային հեռարձակման մատչելիության ապահովում	Հանրային հեռարձակման տարածման համակարգի վերակենդանացում	Հանրային հեռարձակում	2009-2014		
ԽՆԴԻՐ №2					
Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար բարձրագույն կրթության մատչելիության բարելավում	3.1	Բարձրագույն ուսումնական հաստատություններում նախապատրաստական-ինտեգրման դասընթացի հայեցակարգի մշակում, փորձարկում և արմատավորում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, թնությունների ազգային կենտրոն, բարձրագույն ուսումնական հաստատություններ	2009-2014	Օրենսդրական փոփոխություններ և առաջին հերթափոխ 2009 թ.
	3.2	„Սոցիալական դրամաշնորհների ծրագիր“ և այլ նպատակային ծրագրերի մշակում և արմատավորում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2014	
	3.3	Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների առաքում արտասահման բակլավրային և մագիստրային ծրագրերով	Զարգացման և բարեփոխումների հիմնադրամ	2009-2014	
ԽՆԴԻՐ №4					
	4.1	Ոչվրացալեզու դպրոցներում վրացերենի, որպես երկրորդ լեզվի, ուսուցման ծրագրի արմատավորում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, ԵԱՀԿ	2009-2014	
	4.2	Վրաց լեզվի ձեռնարկների և ուսումնական ռեսուրսների ստեղծում և կատարելագործում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2014	

Պետական լեզվի ուսուցման աջակցություն	4.3	Սամցիե-Ջավախեթիից և Քվեմո Քարթլիից ոչվրացալեզու դպրոցների վրաց լեզվի ուսուցիչների թրեյնինգ (հատուկ մասնագիտական վաուչեր ուսուցիչների համար «Վրացերենը, որպես հաղորդակցական լեզու» և «Վրացերենը որպես երկրորդ լեզու» դասավանդելու համար)	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն	2009-2014	Արդեն մտել է վաուչերային ֆինանսավորման մեջ
	4.4	Արտադասարանական լուսավորչական և քաղաքացիական ինտեգրմանը կողմնորոշված ծրագրերի և նախագծերի մշակում և իրականացում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2014	
	4.5	Դեռահասների և չափահասների համար պետական լեզվի տիրապետմանը օժանդակող ծրագրեր	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2014	Ոչկառավարական կազմակերպությունների հետ գործընկերությամբ
	4.6	Վրաց լեզվի ուսուցիչներին տարածաշրջաններում գրավելու միջոցառումների պլանավորում և իրականացում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009	
	4.7	Վրաց լեզվի ուսուցնառության համակարգչային և ինտեռնետային ծրագրեր, պորտալ, լուսավորչական խաղեր	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009	

ՄԵՂԻԱ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՅԹՈՒՆ

ԽՂԴԻՐ №1	Ծրագրի անվանում/միջոցառում	Իրականացնող կազմակերպություն/ գործընկեր	Իրականացման ժամկետներ	Գրառում
Ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում ազգային հեռարձակման մատչելիության ապահովում	Հանրային հեռարձակման տարածման համակարգի վերակենդանացում	Հանրային հեռարձակում	2009-2014	

ՆԱԴԻՐ N2

Ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակվող ծրագրերի մատչելիության ապահովում	1) Հեռուստատեսային լրատվական ծրագրեր		Հանրային հեռարձակում	2009-2014	
	2.1.1	«Մոամբե» արխագրերն (պարբերականություն. շաբաթական մեկ անգամ)			
	2.1.2	«Մոամբե» օսերեն (պարբերականություն. շաբաթական մեկ անգամ)			
	2.1.3	«Մոամբե» հայերեն (պարբերականություն. շաբաթական մեկ անգամ)			
	2.1.4	«Մոամբե» ադրբեջաներեն (պարբերականություն. շաբաթական մեկ անգամ)			
	2.1.5	«Մոամբե» ռուսերեն (պարբերականություն. շաբաթական մեկ անգամ)			
	2) Ռադիոյի լրատվական ծրագրեր		Հանրային ռադիո FM 102.4	2009-2014	
	2.2.1	Լրատվական թողարկում արխագրերն (պարբերականություն. ամեն օր)			
	2.2.2	Լրատվական թողարկում օսերեն (պարբերականություն. ամեն օր)			
	2.2.3	Լրատվական թողարկում հայերեն (պարբերականություն. ամեն օր)			
	2.2.4	Լրատվական թողարկում ադրբեջաներեն (պարբերականություն. ամեն օր))			
	2.2.5	Լրատվական թողարկում ռուսերեն (պարբերականություն. ամեն օր)			
	2.2.6	Լրատվական թողարկում քրդերեն (պարբերականություն. ամեն օր)			

ԽՆԴԻՐ N3				
Հեռարձակման ծրագրերում ազգային փոքրամասնությունների լուսաբանման և մասնակցության ապահովում	Թոք-շոու „Բուսայուրի եզր (Բուսայական բակ)	Հանրային հեռարձակում, ՄԱԿ-ի ասոցիացիա, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն (USAID) - Վրաստանի ազգային ինտեգրման ծրագրի շրջանակներում	2009-2014	

ԽՆԴԻՐ N4				
Ազգային փոքրամասնությունների լեզուներով էլեկտրոնային և տպագիր մեդիայի աջակցություն	1) «Գրականության զարգացման ծրագրի» շրջանակներում տպագիր պարբերական հրատարակություններ.		Վրաստանի մշակույթի, հուշարձանների պահպանության և սպորտի նախարարություն	2009-2014
	4.1.1	Հայալեզու թերթ «Վրաստան»		
	4.1.2	Ադրբեջանալեզու թերթ «Գյուրջիստան»		
	4.1.3	Ռուսալեզու թերթ «Սվոբոդնայա Գրուզիա»		

ԽՆԴԻՐ N5				
Լրատվամիջոցներում հանդուրժողականության և մշակութային պլյուրալիզմի արմատավորման աջակցություն	1) Վավերագրական ֆիլմերի շարք. «Բազմազգ Վրաստան»		Հանրային հեռարձակում,, ՄԱԿ-ի ասոցիացիա, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն (USAID) - Վրաստանի ազգային ինտեգրման ծրագրի շրջանակներում	2009-2014
	2) Հեղինակային հաղորդում «Մեր Վրաստանը»		Հանրային ռադիո FM 102.4	2009-2014

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՏԵՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՈՒՆ

ԽՆԴԻՐ N1	Ծրագրի անվանում/միջոցառում	Իրականացնող կազմակերպություն/գործընկեր	Իրականացման ժամկետներ	Գրառում
Ազգային փոքրամասնությունների հավասար ընտրական իրավունքի ապահովում	Հնտրական քվեաթերթերի թարգմանություն և փոքրամասնությունների լեզուներով	Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողով : միջազգային կազմակերպություններ		

ԽՆԴԻՐ N2

<p>Որոշում ընդունելու գործընթացում ազգային փոքրամասնությունների մասնակցության բարելավում</p>	<p>1) Համագործակցության հուշագրերի ձևակերպում՝ ժողովրդական պաշտպանին կից գոյություն ունեցող ազգային փոքրամասնությունների խորհրդի և հետևյալ նախարարությունների միջև .</p>	<p>Գործադիր իշխանություն</p>	<p>2009</p>		
	ա)	<p>Վերահստեզման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմ;</p>			
	բ)	<p>Վրաստանի կրթության և գիտության նախարարություն,.</p>			
	գ)	<p>Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարություն;</p>			
	դ)	<p>Վրաստանի արդարադատության նախարարություն;</p>			
	ե)	<p>Վրաստանի ներքին գործերի նախարարություն;</p>			
	զ)	<p>Վրաստանի տնտեսական զարգացման նախարարություն,.</p>			
	է)	<p>Վրաստանի տարհանվածների և վտարվածների նախարարություն;</p>			
	ը)	<p>Վրաստանի մշակույթի, հուշարձանների պահպանության և սպորտի նախարարություն:</p>			
		<p>2) Համագործակցության հուշագրերի ձևակերպում տարածաշրջանային ազգային փոքրամասնությունների խորհրդի և պետական լիազորների նահանգապետների աշխատակազմերի միջև հետևյալ տարածաշրջաններում .</p>	<p>Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարություն, նախագահին կից գործող ներդրամտության և քաղաքացիական ինտեզրման խորհուրդ</p>	<p>2009</p>	

	ա)	Պետական լիազորի՝ նահանգապետի աշխատակազմ Քվեմո Քարթլիում ;			
	բ)	Պետական լիազորի՝ նահանգապետի աշխատակազմ Սամցխե-Ջավախեթիում..			
	գ)	Պետական լիազորի՝ նահանգապետի աշխատակազմ Կախեթիում;			
	դ)	Պետական լիազորի՝ նահանգապետի աշխատակազմ Իմերեթիում..			
	ե)	Աճարայի Ինքնավար Հանրապետության կառավարությանը կից			

ԽՆԴԻԴ №2

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի ժողովրդականացում	Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիայի տպագրում և տարածում	Վերահստեղծման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմ. նախագահին կից գործող ներողամտության և քաղաքացիական ինտեգրման խորհուրդ	2009-2014	
--	---	--	-----------	--

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՑԻՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ

ԽՆԴԻԴ №1	Շրագրի անվանում/միջոցառում	Իրականացնող կազմակերպություն/ գործընկեր	Իրականացման ժամկետներ	Գրառում
	1) Սամցխե-Ջավախեթիի ճանապարհի վերակենդանացման նախագիծ	«Հազարամյակի մարտահրավեր-Վրաստանին» հիմնադրամ	2006-2010	
	1.1.1	Սամցխե-Ջավախեթիի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում ճանապարհային-տրանսպորտային ցանցի վերականգնում		

Ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում ենթակառուցվածքի հետագա զարգացում	2) Էներգա-ենթակառուցվածքի վերակենդանացման նախագիծ		«Հազարամյակի մարտահրավեր-Վրաստանին» հիմնադրամ	2006-2010	
	1.2.1	Հյուսիս-հարավ մայրուղային խողովակատարի փաստված տեղամասերի վերականգնում			
	3) Տարածաշրջանային ենթակառուցվածքի զարգացման նախագիծ		«Հազարամյակի մարտահրավեր-Վրաստանին» հիմնադրամ	2006-2010	
	1.3.1	Մունիցիպալային ծառայության բարելավում			
ԽՆԴԻՐ №2					
	1) «Մասնագիտական ուսումնարանների վերակենդանացման» նախագահական ծրագիր		Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2014	
	2.1.1	Ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում մասնագիտական ուսումնարանների վերակենդանացում			
	2) Զուրաբ Ժվանիայի անվան վարչական և հասարակական աստիճանավորների վերապատրաստման դպրոց		Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2012	
	2.2.1	Պետական սեկտորում փոքրամասնության ներկայացուցիչների գրավում			
	3) Այն տարածաշրջանների պահանջների և առանձնահատկության վրա կողմնորոշված մասնագիտական կրթության քաղաքականության և ծրագրերի իրականացում, որտեղ ավանդաբար կամ մեծ թվաքանակով բնակվում են ազգային փոքրամասնություններ		Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2014	
4) Մանր տնտեսությունների վերափոխում շահավետ ագրոբիզնեսի: Ագրոբիզնեսի զարգացման նախագծեր.		«Հազարամյակի մարտահրավեր-Վրաստանին» հիմնադրամ	2006-2011		

2.4.1	Առաջնային արտադրություն			
2.4.2	Ֆերմերների սպասարկման կենտրոնի ստեղծում			
2.4.3	Փոքր վերամշակում			
2.4.4	Արտադրական շղթայի ստեղծում			
5) Վրաստանի տարածաշրջանային զարգացման հիմնադրամի նախագիծ., ներդրումների իրականացում փոքր և միջին չափի ձեռնարկներում		«Հազարամյակի մարտահրավեր-Վրաստանին» հիմնադրամ	2006-2011	

ՄՇԱԿՈՒՑՑԻ ԵՎ ԻՆՔՆԱՏԻՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

ԽՆԴԻՐ N1	Մրագրի անվանում/միջոցառում	Իրականացնող կազմակերպություն/ գործընկեր	Իրականացման ժամկետներ	Գրառում	
Ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնատիպության պահպանում	1) Վրաստանի ազգային փոքրամասնությունների մշակութային աջակցության ծրագիր.	Վրաստանի մշակույթի, հուշարձանների պահպանության և սպորտի նախարարություն., Թբիլիսիի քաղաքապետարան	2009-2014		
	1.1.1	ՀԻԴ – Դավիթ Բաագովի անվան Վրաստանի հրեական պատմա-ազգագրական թանգարանի գործունեության աջակցություն			
	1.1.2	Վրաստանի մշակութային հարաբերությունների կենտրոն («Կովկասյան տան» գործունեության աջակցություն			
	1.1.3	ՀԻԴ – Միրզա Ֆաթալի-Ախունդովի ադրբեջանական մշակութային թանգարանի գործունեության աջակցություն			
	1.1.4	Վրաստանի ռուսական մշակութային կենտրոնի գործունեության աջակցություն			
	1.1.5	ՀԻԴ – Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի աջակցություն			

Ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնատիպության պահպանում	1.1.6	ՀԻԻԴ – Թբիլիսիի ադրբեջանական պետական դրամատիկական թատրոնի աջակցություն			
	2) Տարածաշրջանային գրադարանների, ակումբային հիմնարկությունների և արվեստի դպրոցների աջակցություն				
	1.2.1	Ղվարեղում – Բաղլոջանի երաժշտական դպրոցի աջակցություն	Ղվարեղի շրջանային վարչություն	2009-2014	
	1.2.2	Ախալքալաքիում – երաժշտական և նկարչական դպրոցների, 14 ակումբային հիմնարկությունների (դրանցից 10 հայկական), 4 գրադարանների (դրանցից 2 հայկական) աջակցություն	Ախալքալաքի շրջ. վարչություն	2009-2014	
	1.2.3	Նինոծմինդայում – երաժշտական դպրոցի, 21 գրադարանների (դրանցից 18 հայկական), 20 ակումբային հիմնարկությունների (այստեղից 18 հայկական) աջակցություն	Նինոծմինդայի շրջանային վարչություն	2009-2014	
	1.2.4	Մառնեուլիում – երաժշտական դպրոցի, 18 գրադարանների (այստեղից 11 ադրբեջանական, 4 հայկական), 4 գյուղական ակումբների աջակցություն	Մառնեուլիի շրջանային վարչություն	2009-2014	
	1.2.5	Ծավկայում – երաժշտական դպրոցի, գրադարանների (հայ ազգաբնակչության համար), մշակույթի տան աջակցություն	Ծավկայի շրջանային վարչություն	2009-2014	
	1.2.6	Գորիում – Էրեղվիի երաժշտության դպրոցի, 18 գրադարանների (այստեղից 5 օսական), աջակցություն	Գորիի շրջանային վարչություն	2009-2014	

	1.2.7	Գարդաբանիում – 19 գրադարանների (այստեղից 1 ադրբեջանական, 14 խառը), 1 ակումբի աջակցություն	Գարդաբանիի շրջանային վարչություն	2009-2014	
	1.2.8	Բոլնիսում - 9 գրադարանների (այստեղից 2 ադրբեջանական) աջակցություն	Բոլնիսի շրջանային վարչություն	2009-2014	
	1.2.9	Դմանիսիում – 4 գրադարանների (այստեղից 1 ադրբեջանական) աջակցություն	Դմանիսիի շրջանային վարչություն	2009-2014	

ԽՆԴԻՐ N2

Ազգային փոքրամասնությունների կյուրական և ոչկյուրական մշակութային արժեքների պաշտպանություն	1) Ազգային փոքրամասնությունների կյուրական և ոչկյուրական մշակութային արժեքների պաշտպանություն				
	2.1.1	Ազգային փոքրամասնությունների մշակութային կոթողների հաշվառք և գույքագրում	Վրաստանի մշակույթի, հուշարձանների պահպանության և սպորտի նախարարություն	2009-2014	
	2.1.2	Հուշարձանների վերականգնում	Վրաստանի մշակույթի, հուշարձանների պահպանության և սպորտի նախարարություն	2009-2014	
	2.1.3	Թբիլիսիի պանթեոնների և արվեստի հուշարձանների խնամքի և հոգատարության աջակցության ծրագիր. Թբիլիսիում գոյություն ունեցող պանթեոնների, այդ թվում հայ գրողների և հասարակական գործիչների պանթեոնի խնամք-հոգատարություն և պահպանություն	Թբիլիսիի քաղաքապետարան	2009-2014	

ԽՆԴԻՐ N3

Հանդուրժողականության ոգևորության աջակցություն, փզմշակութային երկխոսության և կապերի օժանդակում	Միջնակարգ դպրոցներում հանդուրժողականության, որպես առարկայի, արմատավորում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, «Փրկենք երեխաներին» դաշնություն	2009-2014	
--	---	--	-----------	--

ԽՆԻՐ N4

Ազգային փոքրամասնությունների մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի մասին հասարակության գիտելիքների խորացում և որպես երկրի մշակութային արժեք դրանց դրսևորում	1) Թոք-շոու .Իտալիայի եզո» (Իտալական բակ)	Հանրային հեռարձակում, ՄԱԿ-ի ասոցիացիա, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն (USAID) – Վրաստանի ազգային ինտեգրման ծրագրի շրջանակներում	2009-2014	
	2) Վավերագրական ֆիլմերի շարք «Բազմազգ Վրաստան»	Հանրային հեռարձակում, ՄԱԿ-ի ասոցիացիա, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն (USAID) – Վրաստանի ազգային ինտեգրման ծրագրի շրջանակներում	2009-2014	
	3) Հեղինակային հաղորդում «Մեր Վրաստանը»	Հանրային ռադիո FM 102.4	2009-2014	